ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կրթության մասին» 1999 թվականի ~~մարտի~~ ապրիլի 14-ի ՀՕ-297 օրենքի 37.1-րդ հոդվածում՝

1) վերնագրում և ամբողջ տեքստում «մասնագիտական» բառից հետո լրացնել «այդ թվում՝ բարձրագույն» բառերով,

2) 2-րդ մասում «վերահսկողությունը» բառից հետո լրացնել «(ստուգման, տեսչավորման և օրենքով սահմանված այլ ձևերով)» բառերով,

3) հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով՝

«3 Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված գործառույթների արդյունավետ իրականացումն ապահովելու համար ուսումնական հաստատությունները և կազմակերպությունները օրենսդրությամբ սահմանված հաշվետվությունները ներկայացնում են կրթության ոլորտի տեսչական մարմին, որն ապահովում է դրանց հասանելիությունը լիազոր մարմնին:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: